Արձանագրություն N 3
ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04 հունվարի 2022թ
ժամը 12:20

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Հասմիկ Ղույլանը, Մանուշակ Գրիգորյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

օրակարգ 1. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու հարցի քննարկում
2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

I. Էլեկտրոնային աճուրդի չկայացած հայտարարելու մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Գնահատող հանձնաժողովի նախագահը ներկայացրեց, որ ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից՝ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն 2021 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացրել է բողոք:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 որոշմամբ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է, որից հետո (eauction.armeps.am) համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում Ընկերությանը ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ծանուցումը ստանալուց հետո Ընկերությունը հրավեր 1-ին մասի 9.3 կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները և զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

2. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունել վերոգրյալը, հրավերով սահմանված պահանջների համաձայն, որոշեց ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ս. Մաթևոսյան

անդամներ՝ _____ Հ. Ղույլան

_____ Մ. Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան